ԵՐԵՎԱՆԻ ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 190 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2022-2026թթ.

ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

ՕԼՅԱ ԱՏՈՄԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021Թ.

ԴՊՐՈՑԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ
1. Դպրոցի առաքելությունը
2. Վերլուծության կատարումը արտաքին միջավայրի
3.Ընդհանուր տեղեկություններ
4.Առկա խնդիրներ SWOT վերլուծություն
5.Ծրագրի նպատակները և խնդիրները
6.Կատարողներ, ժամանակացույց
7. Ծրագրի ռիսկերը
8. Ծրագրի գնահատման չափանիշները

1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

- ✓ Յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպում ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների հիման վրա:

- ✓ Յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովում:

- ✓ Համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված , մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորում:

- ✓ Նպաստել յուրաքանչյուր սովորողի՝
- ▪ վերլուծական, քննադատական մտածողության զարգացմանը.
- ▪ գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման հմտությունների ձևավորմանը.
- ▪ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացմանը.
- ▪ ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.
- ▪ մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.
- ▪ ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
- ▪ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը.



Գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման հմտությունների ձևավորմանը.



Որպես ապագա հայրենասեր քաղաքացու ձևավորմանը

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացմանը.

ՆՊԱՍՏԵԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՍՈՎՈՐՈՂԻ

Մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը

Ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը



Վերլուծական, քննադատական մտածողության զարգացմանը.

Ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը

2. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ

ՈԼՈՐՏՆԵՐԸ

3.1 Շենքային պայմաններ, նյութատեխնիկական բազա, ուսումնական միջավայր

3.2 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն

3.3 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, դրանց վարումը

3.4 Կառավարման և խորհրդակցական մարմիններ

3.5 Աշակերտական համակազմ

3.6 Մանկավարժական համակազմ

3.7 Խորացված հոսքային ուսուցում, դասարանների կոմպլեկտավորում, արտադպրոցական, և արտադասարանական խմբակներ

3.8 Կրթության որակը ՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

3.9 Տեխնոլոգիաներ, նորարարություններ, համագործակցություն

3. Ընդհանուր տեղեկություններ

Իրավաբանական անձի անվանումը	«Երևանի Գ. Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ	
Հիմնադրվել է	1986թ., 1990 թվականից անվանակոչվել է 19-րդ դարի հայ բարերար Գալուստ Գյուլբենկյանի անունով, 2009 թվականից վերակազմավորվել է «Երևանի Գ. Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի:	
Հասցե՝	ք. Երևան, Հ/Ա թ. Բ-2, Բաբաջանյան133/3	
Հեռախոս՝	+37410722160, +37410722250	
Էլեկտրոնային հասցե	School190@schools.am	
Կադաստրային արժեքը	278174969(երկու հարյուր յոթանասունութ միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար ինը հարյուր վաթսունինը) դրամ:	
Շենքի տվյալներ	Մակերեսը---7838.6քառ.մ	Հարկայնությունը---3(երեք)
	Տեսակը---պանելային	Մասնաշենքերի թիվը---3 (երեք)
Շինության տվյալները/կաթսայատուն/	Մակերեսը---47.6քառ.մ	
Լիցենզիա	N 817 /տրման ամսաթիվը---07.11.07թ.	
Կրթական ծրագրի անվանումը	Միջնակարգ ընդհանուր	
ՈՒսուցիչների թիվը	60	
Սպասարկող աշխատողների թիվը	20	
Աշակերտների թիվը	807	
Դասարանների թիվը	36	
Առարկայական կաբինետ	6	
Համակազմի սահմանային թիվը	1500	

4.1 ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Ունի հանդիսությունների՝ վերանորոգված և անհրաժեշտ սարքավորումներով կահավորված երկու(մեծ և փոքր) դահլիճ:

Մասնակի վերանորոգված (մեծ) երկու սպորտդահլիճ:

Վերանորոգված են բոլոր սանհանգույցները:

Փոխված է պատուհանների գերակշիռ մասը(թվով 352 պատուհան):

Առկա են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության արդիականացված լաբորատորիաներ:

Առկա է ինֆորմատիկայի մեկ դասարան՝ հագեցած համակարգիչներով և դյուրակիր համակարգիչներով:

Ռազմագիտության կահավորված դասասենյակ՝ կից վարժասարքով:

Նախնական զինվորական պատրաստության մարզահրապարակ:

Բաց և հրապարակային դասերի համար նախատեսված արդիականացված դասասենյակ:

Ուսումնական միջավայրի ճիշտ գնահատում և բարելավման ուղղությամբ ձեռնարկված քայլեր:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Դպրոցի շենքը հիմնադրումից հետո երբեք հիմնանորոգման չի ենթարկվել:

Շենքի սեյսմակայունություն:

Նկուղը գտվում է անմխիթար վիճակում:

Տանիքն ունի մասնակի վերանորոգման կարիք:

Սպորտդահլիճներին կից հանդերձարանների և փոքր սպորտդահլիճի հիմնանորոգման կարիք:

Փոխարինման ենթակա թվով 86 պատուհան:

Հիմնական ճաշարանը ունի հիմնանորոգման կարիք:

Համակարգչային ևս մեկ դասարանի անհրաժեշտություն:

Համակարգիչների մաշվածություն:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զբաղեցնում է 7838.6քառ.մ տարածք:

Դասասենյակների, կաբինետների, լաբորատորյաների անհրաժեշտ քանակություն:

Պետական ծրագրերով առաջնահերթությամբ նորոգվող դպրոցների շարքում ընդգրկվելու հնարավորություն:

Ճաշարանի հիմնանորոգումը և կից այգին բարեկարգելու աշխատանքների համար կանխատեսելի միջոցներ:

Պատուհանների փոխարինման աշխատանքները ավարտին հասցնելու, բացօթյա դասարան ձևավորելու համար կանխատեսելի միջոցներ:

ՌԻՍԿԵՐ

Արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներ:

Ֆինանսավորման կրճատումներ:

Արտաբյուջետային միջոցների ներգրավման դժվարություններ

Փոփոխություններ համակարգը կանոնակարգող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում:

ԱՆՎԱՆՈՒՄ		
Լաբորատորիա	3	Կահավորված
Սպորտային դահլիճ	2	Մեծը՝ մասնակի վերանորոգված է Փոքր դահլիճն ունի հիմնանորոգման կարիք
Գրադարան/ընթերցասրահ	1	Վերանորոգված, կահավորված
Ճաշարան/բուֆետ	2	Հիմնանորոգմանև կահավորման կարիք
Հանդիսությունների դահլիճ	2	Վերանորոգված, առկա է պրոյեկտոր և ձայնային համակարգ(մեծ դահլիճում)
Սանհանգույցներ	13	Վերանորոգված
Ջեռուցման կաթսա	2	Շահագործվում է 2008թ-ից, ենթակա է մասնակի նորոգման:

ԱՆՎԱՆՈՄ	ՔԱՆԱԿ/ՉԱՓ	ՆՇՈՒՄՆԵՐ
Դասագրքեր	9426	
Ուսուցչի ձեռնարկներ	116	
Գեղարվեստական և ուսումնամեթոդական գրքեր	3947	
Պրոյեկտորներ	9	
Բազմաֆունկցիոնալ տպիչներ	12	
Դյուրակիր համագարգիչ	28	
Դահլիճի ձայնային սարքավորումներ	2	
Համակարգիչներ	33	
Ինտերակտիվ գրատախտակներ	4	

5.1 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան հանդիսանում են ուսումնական միջավայրի ֆիզիկական բաղադրիչը, որտեղ տեղի է ունենում երեխայի ուսուցման և դաստիարակության գործընթացը:

Ուսումնական միջավայրի ճիշտ գնահատումը և բարելավման ուղղությամբ ձեռնարկված քայլերը չափազանց կարևոր են մյուս հիմնախնդրի՝ կրթության որակի բարելավման համար:

Անհրաժեշտ է.

- ✓ Առաջարկություն ներկայացնել համապատասխան մարմիններին գնահատելու դպրոցի շենքի սեյսմակայունության աստիճանը:
- ✓ Աղետների ռիսկի նվազեցման նպատակով
  - ▪ հետևողական լինել դպրոցը պետական ծրագրերով առաջնահերթությամբ նորոգվող դպրոցների շարքում ընդգրկվելու հարցում՝ հատկապես շենքի հիմքի ամրացման, ապաստարանի հետ կապված խնդիրներին լուծում տալու համար:
- ✓ Անհրաժեշտ է միջոցներ հայթայթել դասասենյակներն ու միջանցքները վերանորոգելու և ուսումնական միջավայրն արդիականացնելու համար, որը հնարավոր է միայն պետական ծրագրերով կամ բարեգործական ներդրումների միջոցով:
- ✓ Հիմնանորոգել ճաշարանը և բարեկարգել կից այգին (էկոայգի):
- ✓ Ավարտին հասցնել պատուհանների փոխարինման աշխատանքները(թվով 68 պատուհան):

- ✓ Ստեղծել ուսուցման գործընթացը բացօթյա տարածքում իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ, օգտագործելով դպրոցի հողատարածքը:
- ✓ Ստեղծել թեքահարթակներ՝ դպրոցում ԿԱՊԿՈՒ՝ հենաշարժական համակարգի խանգարումներ ունեցող սովորողների ուսումնական գործընթացը հնարավոր դարձնելու համար:
- ✓ Շարունակել կաբինետների ստեղծման, ձևավորման աշխատանքները,ապահովել սենյակների հարմարեցումը դպրոցի կրթական պահանջներին:
- ✓ Հարստացնել գրադարանը էլեկտրոնային ձեռնարկներով:
- ✓ Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել նոր էլեկտրոնային գրատախտակներ, համակարգիչներ, վերանորոգել հները, լրացնել արագամաշ սարքավորումները:
- ✓ Անվտանգության նկատառումներից ելնելով՝ նորոգել և արդիականացնել դպրոցի միջանցքների, մուտքի, տարածքի տեսահսկող սարքերը:
- ✓ Կահավորել ևս մեկ համակարգչային դասարան:
- ✓ Կահավորել դասասենյակ ուսուցիչների (փոխարինող ուսուցչի անհնարինության դեպքում) կողմից՝ հեռավար դասեր կազմակերպելու համար:

4.2 ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումներ:

Աշակերտների թվով ֆինանսավորում, որի հետևանքով դպրոցը ստանում է բավարար միջոցներ(807 աշակերտ):

Բյուջետային հատկացումների, ուղղությունների և ծախսերի արդյունավետ պլանավորում և իրականացում

Դպրոցը կարողանում է ուսուցիչներին վարձատրել 20% հավելավճարով, վարձատրվում է դասղեկությունը, մ/մ նախագահների աշխատանքը, գրավոր աշխատանքների ստուգումը, տրվում են լրավճարներ:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Դպրոցի շենքի կապիտալ վերանորոգման պետական ծրագրի բացակայության պատճառով դպրոցի շենքային պայմանների բարելավմանն ուղղված ծախսեր, որոնք կարող էին ուղղվել ուսումնական ծրագրերի կատարելագործմանը:

Այլ դրամական մուտքերի (դրամաշնորհներ, բարեգործական նախաձեռնություններ, ձեռնակատիրական գործունեությունից ստացած շահույթ, վարձակալությամբ տրված տարածքներ և այլն) բացակայություն:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտական համակազմ:
Աշխատանքային ռեսուրսների առկայություն:
Դպրոցի շենքը որպես կապիտալային ռեսուրս:
Շրջանավարտների մեծ բանակ:
Ձեռնարկատիրական գործունեության և շահույթի ստացման հնարավորություն:

ՌԻՍԿԵՐ

Արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներ:
Ֆինանսավորման կրճատումներ:
Արտաբյուջետային միջոցների ներգրավման դժվարություններ:
Փոփոխություններ համակարգը կանոնակարգող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում:
Կադրերի ներգրավման դժվարություններ:

ԴՊՐՈՑԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



5.2 ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջնահերթություն դարձնել դպրոցը՝ պետական ծրագրերով առաջնահերթությամբ նորոգվող դպրոցների շարքում ընդգրկվելը, որի շնորհիվ դպրոցի տնտեսված գումարների մեծ մասը կուղղվի ոչ թե դպրոցի շենքային պայմանների բարելավմանը, այլ մանկավարժների մասնագիտական որակները կատարելագործելու, տեխնոլոգիաների ներդրման, ուսումնական միջավայրն արդիականացնելու, ուսուցիչներին և գերազանց առաջադիմություն ցուցաբերած, օլիմպիադաներում հաջողությունների հասած աշակերտներին խրախուսելու նպատակներով:

Այս նպատակների իրականացման համար դպրոցի բյուջեում ապահովել նաև այլ դրամական մուտքեր հաստատության տարեկան նախահաշվում

- ✓ Հովանավորչական և դրամաշնորհային միջոցներ
- ▪ Ստեղծել հոգաբարձուների խորհուրդ, որը կաջակցի դպրոցին հովանավորներ գտնելու և դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու հարցում:

- ✓ Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթ
- ▪ Ճաշարանի հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո իրականացնել սննդի կազմակերպում:
- ▪ Ստեղծել արհեստագործական դասարաններ, կազմակերպել արտադրություն և վաճառք:
- ▪ Իրականացնել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներ

- ✓ Հովանավորներ փնտրել գործարարների, դպրոցի բոլոր տարիների շրջանավարտների մեջ:
- ▪ Ստեղծել շրջանավարտների խորհուրդ, որը կօգնի համախմբել բոլոր տարիների շրջանավարտների կապերն ու հնարավորությունները հարազատ դպրոցի խնդիրների լուծման գործում:
- ▪ Ռիսկերը նվազեցնելու նպատակով պետք է հստակ ներկայացնել խնդիրը, դրա լուծման համար անհրաժեշտ միջոցներն ու ուղիները: Վստահելիությունը մեծացնելու և աշխատանքները բաց և թափանցիկ կազմակերպելու նպատակով պարբերաբար հաշվետվություն ներկայացնել կատարած աշխատանքների և ծախսերի մասին:

4.3 ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ, ԴՐԱՆՑ ՎԱՐՈՒՄԸ

- ✓ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն,
- ✓ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքները և վարչական վարույթի մասին», «Գնումների մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ,
- ✓ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը,
- ✓ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը,
- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը,
- ✓ Կրթության բնագավառը կարգավորող հարկային օրենսդրությունը,
- ✓ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,
- ✓ հանրակրթության պետական չափորոշիչը,
- ✓ հանրակրթական ուսումնական հաստատության կառավարմանը վերաբերող կրթության կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ նախարարություն) համապատասխան նորմատիվ ակտերը և այլ փաստաթղթեր:

4.3 ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ, ԴՐԱՆՑ ՎԱՐՈՒՄԸ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի հասանելիություն:

Պարտադիր գործածության ենթակա փաստաթղթերի առկայություն (հրամանների գրանցամատյան, աշակերտական հրամանագիրք, միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան, խորհուրդների արձանագնությունների գրանցամատյաններ, և այլն), աշխատողների և աշակերտների անձնական գործեր(էլ. տարբերակով), էլ. դասամատյաններ, տնօրենի, փոխտնօրենների, մ/մ նախագահների, դասղեկների տարեկան պլաններ, ուսուցիչների տարեկան թեմատիկ պլաններ, ներքին գնահատում, ինչպես նաև ֆինանսական բոլոր փաստաթղթերի առկայություն, որոնք լրացվում են սահմանված կարգով և դրանց վարումը համապատասխանեցված է դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Հաճախ կատարվող փոփոխություններ, դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերում:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող կարգերում առկա երկիմաստ, երբեմն նաև ոչ հստակ ձևակերպումներ:

Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում , matyanemis.am-ում աշխատանքի դժվարություններ:

ԴՇՀ էլեկտրոնային համակարգում, հաշվապահական ծրագրերի պաշտոնական կայքերում աշխատանքի դժվարություններ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԶՆԱԿ հիմնադրամի կայքից օգտվելու հնարավորություն:
Համագործակցություն ԿՏԱԿ-ի հետ:
Աշխատողների վերապատրաստումներ, սեմինարներ կազմակերպելու համար անհրաժեշտ կապիտալային և աշխատանքային ռեսուրսներ:
Համագործակցություն ԳՈՐԾՔ ՍՊԸ-ի հետ:

ՌԻՍԿԵՐ

Փոփոխություններ համակարգը կանոնակարգող օրենքներում

և ենթաօրենադրական ակտերում:

Կադրերի ներգրավման դժվարություններ:

5.3 ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ, ԴՐԱՆՑ ՎԱՐՈՒՄԸ

ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Համագործակցել դպրոցների տնօրենների, լիազոր մարմնի և շահառու այլ կազմակերպությունների հետ որպեսզի դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը և դրանցում կատարված փոփոխությունները (պարզաբանումներով հանդերձ) հասանելի լինեն մեկ ընդհանուր օնլայն հարթակում:

- ✓ Համագործակցել ԿՏԱԿ-ի համակարգում գործող ԴԿՏՀ-ի հետ.
  - ▪ Հանդես գալ առաջարկներով դպրոցների կառավարման տեղեկատվական համարգում աշխատանքները հեշտացնելու, ավելի արդյունավետ դարձնելու նպատակով

- ✓ EMIS,ԴՇՀ էլեկտրոնային համակարգի, հաշվապահական ծրագրերի պաշտոնական կայքերի հետ աշխատող վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ բոլոր աշխատողների համար պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ, սեմինարներ:

- ✓ Կարևորել և խրախուսել աշխատողների ինքնակատարելագործման և այս բնագավառում իրենց կարողություններն ու հմտությունները զարգացնելու ձգտումները:

- ✓ Համագործակցել «ԳՈՐԾՔ» ՍՊԸ-ի հետ.
  - ▪ համատեղ իրականացնել կադրային գործավարությանն ուղղված մոնիթորինգներ:

4.4 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ.

Կառավարման խորհուրդ,

Մանկավարժական խորհուրդ,

Ծնողական խորհուրդ,

Աշակերտական խորհուրդ

Խորհուրդներն իրենց վերապահված լիազորությունները կատարում են բարեխղճորեն, կարգին համապատասխան կազմակերպում են իրենց աշխատանքները, գրանցվում են նիստերը, օրակարգում քննարկվող հարցերը մշակված և կազմված են պահանջներին համապատասխան:

Մանկավարժական, ծնողական խորհուրդների առողջ և արդյունավետ համագործակցություն

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ:

Աշակերտական խորհրդի պասիվություն դպրոցի խորհրդակցական մարմինների և այլ դպրոցների աշակերտական խորհուրդների հետ համագործակցության շրջանակներում:

Ուսումնական հաստատության գործունեությանը, նպատակներին և խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը լիազոր մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգաբարձուների խորհուրդ ստեղծելու հնարավորություն:

Շրջանավարտների խորհուրդ ստեղծելու հնարավորություն:

Ուսումնական հաստատության խնդիրների լուծմանն ուղղված աջակցություն:

Համագործակցության ընդլայնման հնարավորություն:

ՌԻՍԿԵՐ

Արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներ:
Ֆինանսավորման կրճատումներ;
Արտաբյուջետային միջոցների ներգրավման դժվարություններ:
Փոփոխություններ համակարգը կանոնակարգող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում:
Կադրերի ներգրավման դժվարություններ:

5.4 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ.

ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Կարևոր է ընդլայնել դպրոցի կառավարման խորհրդի լիազորությունները հետևյալ ուղղություններով՝
  - դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
  - կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
  - դպրոցի հիմնանորոգման վերաբերյալ լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:

- ✓ Դպրոցում արմատապես բարելավել ծնողական խորհրդի գործունեությունը և ծնողներին ընդգրկել ուսման և դաստիարակության կարևորագույն գործառույթներում: Կարևորել ծնողական խորհրդի հետևյալ լիազորությունները՝
  - ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում,
  - ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում,
  - ծնողական համալսարանի ձևավորում, որտեղ կկազմակերպվեն հանդիպումներ, խորհրդատվություններ հոգեբանի, իրավաբանի, բժիշկների և այլ մասնագետների կողմից, դեռահասության տարիքի սովորողներին հուզող հարցերի պարզաբանումներ ստանալու համար,
  - ակտիվ մասնակցություն արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին,
  - ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը
  - աջակցել ծնողական խորհրդի աշխատանքի կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային խնդիրների կարգավորման հետ կապված:

- ✓ Նպաստել աշակերտական խորհրդի աշխատանքներին, դպրոցի խորհրդակցական մարմինների և այլ դպրոցների աշակերտական խորհուրդների հետ համագործակցության շրջանակներում ակտիվություն ցուցաբերելու ուղղությամբ:
- ✓ Իրականություն դարձնել աշակերտական խորհրդի համագործակցությունը iPrivacy.club օնլայն ապահովության տեղեկատվական ակումբի հետ, որի միջոցով աշխորհի անդամները կստանան հիմնարար գիտելիքներ համացանցի օգտագործման անվտանգության վերաբերյալ և այդ գիտելիքներն ու տեղեկատվությունը կփոխանցեն իրենց համադասարանցիներին: Գործունեության ընդլայնման շրջանակներում կհամագործակցեն նաև այլ դպրոցների աշակերտական խորհուրդների հետ:
- ✓ Բարձրացնել դպրոցի <u>աշակերտական խորհրդի</u> դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում:
- ✓ Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ՝ աշակերտական ինքնավարության միջոցով:
  - Ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման միջոցով: Այս նպատակով ունենալ առաջարկությունների արկղ, որտեղ սովորողները կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն այս կամ այն խնդրի վերաբերյալ, ինչպես նաև խնդիրների լուծման իրենց տարբերակները:
  - Ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը:
  - Աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:

- ✓ Դպրոցում ձևավորել Հոգաբարձուների խորհուրդ
- ✓ Ձևավորել շրջանավարտների խորհուրդ:

4.5 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Կոմպլեկտավորված 36 դասարան:

Աշակերտական համակազմը համալրվում է ոչ միայն համայնքի այլ նաև տարբեր համայնքներից եկած սովորողներով: Դպրոցում սովորում են շուրջ 800 (ութ հարյուր) աշակերտ և այդ ցուցանիշով հանրապետության ավագ դպրոցների շարքում առաջիններից է:

Ակտիվ մասնակցություն համադպրոցական տարատեսակ միջոցառումներին, առարկայական օլիմպիադաներին, մարզական, մշակութային միջոցառումներին :

ՏՀՏ կիրառելու հմտություններ::

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Սովորելու հանդեպ մոտիվացիայի պակաս:

Կարգապահական կանոնների թերացումներ:

Դժվարություններ նոր ընդունված (10-րդ դասարան) սովորողների միջանձնային հարաբերություններում:

Սովորողների մասնագիտական կողմնորոշման խնդիրներ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցի տեղակայումը բնակչության բարձր խտություն ունեցող թաղամասում:

Վարչական աշխատանքների օպերատիվ կազմակերպումը:

Հմուտ և փորձառու ուսուցիչներ:

Մասնախմբերի ակտիվ գործունեություն:

ՌԻՍԿԵՐ

Արտագաղթ:

Ծնելիության ցածր տոկոս:

Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը:

Ֆինանսավորման կրճատումներ:


Աշակերտների թիվը
820
800
780
760
740
720
700
680
660
709
745
789
806
2018-2019
2019-2020
2020-2021
2021-2022
Աշակերտների թիվը

5.5 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական դպրոցների համար կարևոր հիմնախնդիր է աշակերտական համակազմի համալրումը, որն էլ պայմանավորում է դպրոցի գոյությունը, զարգացումը, ֆինանսական,նյութական բարեկեցիկ վիճակը, դպրոցի առջև ծագած շատ խնդիրների /նյութատեխնիկական բազա, ուսումնական անհրաժեշտ միջավայր, աշխատավարձ և այլն/ լուծումը:

- ✓ Բարձր պահել դպրոցի վարկանիշը, ապահովել հասարակության և աշակերտական, ծնողական միջավայրի բավարարվածությունը մատուցվող կրթական ծառայություններից:
- Այս նպատակի համար շարունակել դպրոցի լավագույն ավանդույթները և աշխատել ավելի մեծ պատասխանատվությամբ:
- ✓ Աշակերտների մեջ ձևավորել դպրոցի կարգապահական կանոններին խստորեն հետևելու և դրանք չխախտելու բարձր պատասխանատվություն :
- Այս նպատակի իրագործման համար համագործակցային աշխատանք իրականացնել տնօրենի, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի, ոստիկանի, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչի, հոգեբանի, դասղեկների և ծնողների հետ միասին: Կարգազանց աշակերտներին ավելի շատ ընդգրկել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում: Ցուցաբերել անհատական մոտեցում և իրականացնել լուրջ հետազոտական աշխատանք նրանց վարքագծի պատճառները վերհանելու ուղղությամբ: Սերտ համագործակցել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմնի հետ՝ պարբերաբար դպրոցի կարգապահակ կանոնները խախտող սովորողի համար սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու վերաբերյալ առաջարկությամբ:

- ✓ 10-րդ դասարանցիներին ներդասարանական ադապտացիան ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով
- կազմակերպել դասղեկ-հոգեբան համակցված դասաժամեր , որտեղ տարբեր մեթոդների միջոցով /ադապտացիային ուղղված խաղեր,ինքնաներկայացում, ինտերակտիվ հարց ու պատասխան/ հնարավոր կլինի խմբի անդամների համար ավելի լավ ճանաչելի դարձնել համադասարանցիների անձնային առանձնահատկությունները և անձնային հոգեբանական սահմանները :
- Հաճախակի կազմակերպել արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներ:

✓ Մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը նպաստելու նպատակով.

- ուսումնասիրել շուկան, բացահայտել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունները, ավելի հաճախ կազմակերպել հանդիպումներ տարբել ոլորտների առաջատար մասնագետների հետ(շեշտը դնել պահանջարկ ունեցող մասնագիտությունների վրա), որոնք կկիսվեն իրենց փորձով, հաջողություններով, մասնագիտության լավ ու վատ դրսևորումներով, կներկայացնեն տվյալ մասնագետից պահանջվող և մասնագիտական, և SOFT(փափուկ) հմտությունները:
- Կազմակերպել այցեր արտադրամասեր, շփումներ կոնկրետ մասնագետների հետ, արտադրության տեխնոլոգիաներին ավելի մոտիկից ծանոթանալու համար:

- «190-ի կամուրջներ » ֆորմատով հանդիպումներ կազմակերպել արտերկրում իրենց ուսումը շարունակած ուսանողների հետ, որոնք կպատմեն իրենց հաջողությունների, հանդիպած դժվարությունների, դրանց հաղթահարման ճանապարհին ձեռք բերած նոր կարողությունների և հմտությունների, միջազգային տարբեր ծրագրերին մասնակցելու և անհնարին թվացող երազանքները իարականություն դարձնելու հնարարավորությունների և ուղիների մասին:

✓ Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինման խնդիրներն իրականացնելիս օգտագործել աշակերտական խորհրդի որպես սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմնի հնարավորությունները, քանի որ դա նպաստելու է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը:

Անհրաժեշտ է նաև՝

- Սովորողների իրավունքների և ազատությունների պահպանում պետական կրթական չափանիշներին համապատասխան,

- Սովորողների կրթության բովանդակային կառուցվածքի վերազինում, սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրի կազմման և իրականացման միջոցով,
- Արտադասարանական խմբակների աշխատանքների կազմակերպում այն հաշվարկով, որ դրանցում ընդգրկվածությունը հասնի 50%-ի,
- Առարկայական օլիմպիադաների տարածքային, մարզային և հանրապետական փուլերին առավել ակտիվ մասնակցություն,
- Սովորողների կրթության և դաստիարակության հետ առնչվող մեթոդական և դիդակտիկ նյութերով ապահովում,
- Սովորողների շահագրգռում՝ հետազոտական աշխատանքներ կատարելու, հետազոտությունների կազմակերպման և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում:

4.6 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Վարչական աշխատանքների օպերատիվ կազմակերպում:

Հմուտ և փորձառու ուսուցիչներ:

Մասնախմբերի ակտիվ գործունեություն:

Համադպրոցական միջոցառումների բազմազանություն:

Մանկավարժական համակազմը պարբերաբար համալրվում է երիտասարդ կադրերով՝ ապահովելով սերնդափոխությունը:

Մանկավարժների ակտիվ մասնակցությունը կամավոր ատեստավորմանը:

Բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի առկայություն:

Կամավոր ատեստավորումն անցած , տարակարգ ունեցող և մենթոր ուսուցիչներ:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Մասնակցություն միջազգային կրթական ծրագրերին:

Որոշ ուսուցիչների ՏՀՏ միջոցների, հեռավար ուսուցման հարթակների ոչ լիարժեք տիրապետում :

Մանկավարժական պոտենցիալի ոչ ճիշտ գնահատում, գնահատման կոնկրետ չափանիշների բացակայություն:

Ուսուցչի վարքի կանոնների խախտման դրսևորումներ:

Համակազմը նոր և փորձառու կադրերով համալրելու դժվարություններ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կամավոր ատեստավորման և աշխատավարձերի բարձրացման ծրագրի ներդրում:
Ուսուցիչների դրամական խրախուսման հնարավորություններ:
Հաճախակի իրականացվող վերապատրաստումներ և սեմինարներ:
Կրթության ոլորտի բարեփոխումներ:

ՌԻՍԿԵՐ

ՌԻսուցչի վարկանիշի անկում:
Կադրերի ներգրավման դժվարություններ:
Արտաբյուջետային միջոցների ներգրավման դժվարություններ:
Գնաճի և ուսուցչի աշխատավարձի բարձրացման խիստ անհամապատասխանություն:
Սոցիալական վատ պայմաններ:

5.6 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Հետևողականորեն աշխատանք տանել մանկավարժական կադրերի ճիշտ ընտրության, մանկավարժական համակազմի մասնագիտական կարողությունների և մեթոդական պատրաստվածության բարձրացման ուղղությամբ,որը կապահովի մատուցվող կրթական ծառայությունների որակը: Զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները և հմտությունները սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար:

✓ Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը համարվում է դպրոցի ռազմավարություններից մեկը: Այն ենթադրում է ՀՀ կառավարության 14.10.2010թ. N 1391- Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարում, այսինքն՝

- Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:
- Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման:
- Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ,խորհրդատվություններ:
- Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին,կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ:
- Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը:
- Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակներ:
- Հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից: Այդ նպատակով կազմակերպել դասընթացներ:

- Կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով (armedu.am, edu.am, lid.armedu.am, emis.am և այլն):
- Ուսուցիչների կողմից մանկավարժի վարքագծի կանոնների խիստ պահպանում:
- Աջակցել մանկավարժներին մշակել և տպագրել իրենց մեթոդական աշխատանքները, ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար:

✓ Բարձրացնել ուսուցիչների մոտիվացիան.

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ դրամական պարգևատրումների տեսքով խրախուսման միջոցներ կիրառել աշխատողների համար: Այս նպատակի համար սահմանել հստակ ***չափանիշներ***.

4.7 ԽՈՐԱՑՎԱԾ ՀՈՍՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄ , ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Կոմպլեկտավորված 36 դասարան:

Գործում են հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքեր՝ համապատասխան ենթահոսքերով (համապատասխան համակարգողներով):

Դպրոցում առկա է 6 մեթոդմիավորում, որոնք արդյունավետ են կազմակերպում աշխատանքները:

Սովորողների խտություն:

Դասավանդող ուսուցիչների մասնագիտական որակներ:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Նախագծային և հետազոտական աշխատանքների կազմակերպման պասսիվություն:

Սովորողների կարողություններին և նախասիրություններին համապատասխան որոշ հոսքերի(արհեստագործական, ՏՀՏ և այլն) բացակայություն:

Սովորողների կողմից իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան միջավայրի և հոսքի ընտրության դժվարություններ:

Արտադասարանական, արտադպրոցական խմբակների բացակայություն:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔ
  - Լեզվաբանական
  - Պատմահրավագիտական
- ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՍՔ
  - Տնտեսագիտական
  - Ֆիզմաթ
  - Կենսաքիմիական

ՌԻՍԿԵՐ

Արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներ:

Ֆինանսավորման կրճատումներ:

Արտաբյուջետային միջոցների ներգրավման դժվարություններ:

Փոփոխություններ համակարգը կանոնակարգող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում:

Կադրերի ներգրավման դժվարություններ:

5.7 ԽՈՐԱՑՎԱԾ ՀՈՍՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄ , ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Դպրոցում ձևավորել ՏՀՏ և արհեստագործական հոսքեր համապատասխան ենթահոսքերով:
  - Այդ նպատակով գտնել համապատասխան մասնագետներ, կահավորել համապատասխան դասարաններ, ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ, նյութեր: Մասնագետների հետ ստեղծել ուսումնամեթոդական նյութեր, կազմել ծրագրեր:
- ✓ Դպրոց ընդունվող սովորողների հետ կազմակերպել խորհրդատվություն, իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան հոսքի ճիշտ ընտրություն կատարելու համար:
- ✓ Ստեղծել արտադասարանական խմբակներ՝ ելնելով սովորողների նախասիրություններից և համայնքի կարիքներից:
  - Տեխնիկական կրթության բազան ուժեղացնելու, սովորողների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու, տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժ պատրաստելու նպատակով համագործակցության եզրեր փնտրել Արմաթ-ի հետ ինժեներական լաբորատորիա հիմնելու նպատակով (քանի որ շուկայում անընդհատ աճում է այս մասնագիտությունների պահանջարկը):
  - Ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերման և ինքնուրույն կյանքի նախապատրաստման նպատակներից ելնելով՝ համագործակցել Xdrive կազմակերպության հետ: Գաղտնիք չէ, որ մերօրյա առաջնահերթություններից է անձնական փոխադրամիջոցի առկայությունը, իսկ ապահով և արդյունավետ ընթացքի գրավականը՝ երթևեկության կանոնների իմացությունն ու վարորդական որակյալ հմտություններն են:

Աշակերտները հնարավորություն կստանան դպրոցում ստանալ երթևեկության համար կարևորագույն ամփոփ և լիարժեք գիտելիքներ, ինչի շնորհիվ դասընթացի ավարտին կարող են հանձնել վարորդական իրավունքի տեսական քննությունը, իսկ ցանկացողները կարող են շարունակել գործնական դասընթացները Xdrive Ավտո-մոտո դպրոցում ավելի մատչելի պայմաններով և չափահաս դառնալուն պես ստանալ վարորդական վկայական:

- ✓ Ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովման նպատակի ճանապարհին դպրոցի 12-րդ դասարաններում ավելացնել ընտանեկան հոգեբանության ժամեր, դպրոցական բաղադրիչի հաշվին: Որը կօգնի հասկանալ
  - ներընտանեկան հարաբերությունների առանձնահատկությունները,
  - կծանոթացնի ընտանեկան նորմատիվ ճգնաժամերի և դրանց հաղթահարման ուղիների հետ,
  - կներկայացվի ընտանիքի կառուցվածքային և ֆունկցիոնալ բաղադրիչները:

4.8 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ՝ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված շրջանավարտների բարձր տոկոս:

Առարկայական օլիմպիադաների տարածքային, համայնքային և հանրապետական փուլերում սովորողների հաջողություններ:

Արտադասարանական, արտադպրոցական միջոցառումների հագեցվածություն:

Բարձր պատասխանատվության առկայություն դպրոցի տնօրենության և ուսուցչական անձնակազմի մոտ:

Բարձր մասնագիտական որակավորում, կամավոր ատեստավորումն անցած , տարակարգ ունեցող և մենթոր ուսուցիչներ:

10-11-րդ տնտեսագիտական բոլոր դասարաններում ձեռնարկատիրական կրթություն առարկայի դասավանդում դպրոցական բաղադրիչի հաշվին:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Սովորողների մոտիվացիայի պակաս:

Ուսուցիչների մոտիվացիայի պակաս:

Հեռավար ուսուցման հարթակների ոչ բավարար իմացություն և կիրառում ուսուցիչների կողմից:

Արդիական ուսումնական նյութերի պակաս(էլեկտրոնային) :

Գործնական պարապմունքների, կիրառական հմտությունների պակաս:

Օլիմպիադաներին մասնակցության ցածր տոկոս:

Նախագծային, հետազոտական աշխատանքների նկատմամբ և ուսուցիչների, և սովորողների պասիվություն:

Համակցված դասերի պակաս:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովորողների մոտիվացիայի ուսումնասիրման հնարավորություն:
Ուսուցիչների դրական խրախուսման հնարավորություններ:
Հաճախակի իրականացվող վերապատրաստումներ և սեմինարներ:
Կրթության ոլորտի բարեփոխումներ:
Օլիմպիական ակումբների ստեղծման հնարավորություն (խմբակների տեսքով):

ՌԻՍԿԵՐ

Արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներ:
ՈՒսուցչի վարկանիշի անկում:
Կադրերի ներգրավման դժվարություններ:
Արտաբյուջետային միջոցների ներգրավման դժվարություններ:
Սոցիալական և ընտանեկան վատ պայմանները:

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ





5.8 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ՝ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Բարձրացնել սովորելու հանդեպ մոտիվացիան.
  - Այդ նպատակով իրականացնել սովորողների մոտիվացիայի ուսումնասիրություն:

Հենց ուսումնական մոտիվացիայով է պայմանավորված սովորողի՝ուսումնական խնդիրների վերհանման և հաջողությամբ լուծելու ընդունակությունը : Հետազոտման արդյունքների վերլուծությունը թույլ կտա վեր հանել այժմ բավական արդիական մի խնդրի քանակական և որակական կողմերը, ուսումնական մոտիվացիայի ընդհանուր մակարդակը , առանձին կողմերի /ներքին և արտաքին մոտիվների,սոցիալական և իմացական մոտիվների , ուսման անձնային իմաստի . . . / զարգացման մակարդակները:

Կօգնի ուսուցչական խմբին ավելի մանրամասն ծանոթանալու յուրաքանչյուր ուսումնական աստիճանում ուսումնական մոտիվացիայի ավելի արտահայտված ցածր ցուցանիշներին , յուրաքանչյուր դասարանի ուսումնական մոտիվացիայի ընդհանուր պատկերի կամ առանձին մաս կազմող կողմերի քանական և որակական տվյալներին և անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր աշակերտի ուսումնական մոտիվացիայի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել անհատական մոտեցման պահանջները : Ստացված տվյալները կօգնեն վեր հանված խնդիրների լուծման համար մշակել ստրատեգիկ մոտեցում՝ ուշադրությունը հրավիրելով թիրախային կողմերի վրա :

Կօգնի ավելի արդյունավետ և առարկայական դարձնելու ծնողների հետ խնդրի քննարկումները հանդիպման տարբեր ձևաչափերի ընթացքում :Վերջինս հնարավորություն կտա ծնողին ավելի հստակ պատկերացնել խնդրի պատճառահետևանքային կապերը և ընտրել ծնողավարման ավելի արդյունավետ մոտեցումներ:

Հնարավորություն կտա տալու գիտական հիմնավորումներ վերջին տարիներին ուսման հանդեպ հետաքրքրության կորստի արտահայտված դրսևորումների վերաբերյալ : Հետագայում, այլ դպրոցների հետ համագործակցելով կարելի է իրականացնել հետազոտական աշխատանքների համեմատականներ տանելու,փորձի փոխանակման նպատակով :

- ✓ Ստեղծել առանձին օլիմպիական ակումբներ, օլիմպիադաներին ավելի բարձր արդյունքներ գրանցելու համար:
- ✓ Բարձր առաջադիմություն ունեցող, օլիմպիադաներին ակտիվ մասնակցություն և հաջողություններ արձանագրած, արտադպրոցական և արտադասարանական աշխատանքերին ակտիվ մասնակցող սովորողներին խրախուսել պատվոգրերով, շնորհակալագրերով, մրցանակներով, դրամական պարգևատրումներով և այլն:

- ✓ Սովորելու և սովորեցնելու ավանդույթի ներդրում.
  - «Ուժեղները օգնում են թույլերին» Սովորողների շրջանում կամավորության մշակույթի խթանումը պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության առանցքային խնդիրներից է: Դպրոցում կամավորական աշխատանքի ներդրումը հնարավորություն կտա գիտակ աշակերտներին ավելի խորացնել սեփական գիտելիքները, ձեռք բերել դասավանդման փորձ, իսկ այն աշակերտները ովքեր ունեն լուրջ բացթողումներ հնարավորություն կունենան լրացնել բացթողումները համադասարանցիների կամ դպրոցի այլ աշակերտների օգնությամբ: Այս նպատակի համար կարելի է ստեղծել կամավորական խմբեր տարբեր առարկաներից: Կամավորական աշխատանքը սովորողներին հնարավորություն կտա բարելավել իրենց գիտելիքները, հմտությունները, ձեռք բերել անհրաժեշտ փափուկ/Soft/ հմտություններ, ինչպես նաև դասավանդման փորձ: Կամավորական աշխատանքների մեջ կարող ենք ներառել նաև ԵՊՀ ուսանողներին՝ ԵՊՀ ուսանողական խորհրդի հետ ստորագրված հուշագրի շրջանակներում:

- ✓ Բարձրացնել ուսուցիչների մոտիվացիան.

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ դրամական պարգևատրումների տեսքով խրախուսման միջոցներ կիրառել աշխատողների համար: Այս նպատակի համար սահմանել հստակ ***չափանիշներ.***

- Բաց և հրապարակային դասերի ***արդյունավետ*** կազմակերպում:
- Մանկավարժական ընթերցումներ, որն իր մեջ կպարունակի հետաքրքիր լուծումներ, նորովի մոտեցում, նոր հնարքներ կիրառում:
- Ուսումնամեթոդական նյութերի ստեղծում (էլեկտրոնային):
- Համակցված դասերի կազմակերպում:
- Միջոցառումների կազմակերպում:
- Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների կազմակերպում:
- Ուսման բարձր որակ:
- Նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացում:
- Ուսուցչի վարքագծի կանոնների պահպանում, աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունների ճիշտ կառուցում:
- Դպրոցի կարգապահական կանոնների խիստ պահպանում:
- Ուսուցման ընթացքում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառում:
- Նորարարությունների ներդրում:

✓ Հորդորել մասնախմբերին զարկ տալ նախագծային ուսուցմանը, սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով: Հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրությամբ ուսուցիչը պետք է ստանձնի մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր և նպաստի սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը:

4.9 ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Համակարգչային դասարանի, դյուրակիր համակարգիչների, համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակների, բազմաֆունկցիոնալ տպիչների, պրոյեկտորների, վարժասարքի առկայություն:

Ուսուցիչների և սովորողների 90%-ից ավելին ապահովված է հեռավար կրթության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումներով:

Դպրոցը համագործակցում է ԵՊՀ-ի հետ:

Դպրոցն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ասոցացված դպրոցների շարքում:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Հեռավար ուսուցման հարթակների ոչ բավարար իմացություն և կիրառում ուսուցիչների կողմից:

Ուսումնամեթոդական նյութերի պակաս:

Էլեկտրոնային քարտեզների բացակայություն:

Նորարարությունների նկատմամբ հարմարվողականության դժվարություններ:

Էլեկտրոնային գրատախտակների և համակարգիչների ոչ բավարար քանակություն:

Էլեկտրոնային գրատախտակով աշխատելու հմտության պակաս:

ՏՀՏ և մյուս ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցության պակաս:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմաթ-ի հետ համագործակցության հնարավորություն:

Բարձր մասնագիտական որակավորում, կամավոր ատեստավորումն անցած , տարակարգ ունեցող և մենթոր ուսուցիչներ:

Դպրոցի շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան:

Տարբեր կազմակերպությունների պատրաստակամությունը դպրոցի հետ համագործակցության գործում:

ՌԻՍԿԵՐ

Արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներ

Ֆինանսավորման կրճատումներ, արտաբյուջետային միջոցների ներգրավման դժվարություններ:

Փոփոխություններ համակարգը կանոնակարգող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում:

Կադրերի ներգրավման դժվարություններ:

5.9 ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ , ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.

ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Տեխնիկական կրթության բազան ուժեղացնելու, սովորողների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու, տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժ պատրաստելու նպատակով համագործակցության եզրեր փնտրել Արմաթ-ի հետ՝ ինժեներական լաբորատորիա հիմնելու նպատակով (քանի որ շուկայում անընդհատ աճում է այս մասնագիտությունների պահանջարկը):
- ✓ Աշխարհն ընթանում է արդիականացման ճանապարհով և այդ ճանապարհին ամեն բան ենթարկվում է փոփոխության: Հեռահար պատերազմի և պաշտպանության հնարավորություն ունենալը անհրաժեշտություն է դարձել պետությունների համար, և անվտանգության տեսանկյունից այս խնդիրն առավել քան հրատապ է, ուստի պետք է դպրոցում ևս կարևորել ժամանակի այս մարտահրավերը և աշակերտներին ուղղորդել դեպի ժամանակակից ռազմաարդյունաբերական ոլորտ: Այս նպատակի համար համագործակցության եզրեր գտնել ՀՀ-ում գործող ռազմաարդյունաբերությամբ զբաղվող ընկերությունների հետ, ինչպիսին է օր. UAVLAB-ը:
- ✓ ՏՀՏ, հեռահաղորդակցման միջոցներ կիրառող, նորարարություններին հակված ուսուցիչների խրախուսում:

- ✓ Դպրոցն ընդգրկել մենթոր դպրոցների ցանկում: Դպրոցի տեխնիկական հագեցվածությունը, որակյալ մասնագետների առկայությունը, ովքեր տիրապետում են դասավանդման նոր մեթոդներին և ՏՀՏ-ին, թույլ են տալիս դպրոցին դրսևորել բարի կամք մենթոր դպրոցների շարքում ընդգրկվելու և իր մասնակցությունն ունենալու ՀՀ բոլոր աշակերտների համար հավասար որակյալ կրթություն ապահովելու կարևորագույն գործին: Նման միջդպրոցական համագործակցությունը կնպաստի.
- դպրոցի հեղինակության և վարկանիշի բարձրացմանը
- փորձի հարստացմանը
- համագործակցային հմտությունների զարգացմանը

- ✓ Համագործակցություն CISCO ակադեմիայի հետ, որն իրենից ներկայացնում է եզակի ծրագիր, որը միավորում է տոխնոլոգիաները և ուսուցման ժամանակակից մեթոդները: Տալով կիրառական գիտելիքներ և հմտություններ՝ ծրագիրը սովորողների, ինչպես նաև ուսուցիչների համար կբացի կարիերայի նոր հնարավորություններ (ծրագրավորում, համակարգիչների սպասարկում, ինտերնետային սարքեր, կիբեռանվտանգություն և այլն):

- ✓ Հանդիպումներ իրականացնել սթարթափերի հեղինակների հետ, որոնք կկիսվեն իրենց փորձով հաջողություններով,կպատմեն բիզնես գաղափարների ֆինանսավորման հնարավորությունների մասին: Սա նաև մոտիվացնող մի նոր ուժ կլինի սովորողների շրջանում, ուսման և գիտելիքի կարևորման ևս մի ազդակ:

- ✓ Կահավորել ևս մեկ համակարգչային դասարան:

- ✓ Կազմակերպել ուսուցիչների դասընթացներ ՏՀՏ միջոցների կիրառումն ընդլայնելու, հեռավար ուսուցման հարթակներին տիրապետելու, ուսուցման ընթացքում դրանք լայնորեն օգտագործելու նպատակով:

Գործողություններ	կատարողներ	ժամանակացույց	Ֆինանսական ծախսեր
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան			
Առաջարկություն ներկայացնել համապատասխան մարմիններին գնահատելու դպրոցի շենքի սեյսմակայունության աստիճանը	Տնօրեն	2022թ.	
Հետևողական լինել դպրոցը՝ պետական ծրագրերով առաջնահերթությամբ նորոգվող դպրոցների շարքում ընդգրկվելու հարցում՝ հատկապես շենքի հիմքի ամրացման , ապաստարանի հետ կապված խնդիրներին լուծում տալու, դասասենյակներն, միջանցքները , հանդերձարանները, փոքր սպորտդահլիճը վերանորոգելու և ուսումնական միջավայրն արդիականացնելու համար համար:	Տնօրեն, Կառավարման խորհուրդ, Հոգաբարձուների խորհուրդ	2022-2026թթ.	Պետական աջակցություն բարեգործություն
Ճաշարանի հիմնանորոգում և կից այգին բարեկարգելու աշխատանքներ	Տնօրեն Տնտ. գծով տեղակալ Գնումների համակարգող Հաշվապահ	2023-2024թթ	Դպրոցի բյուջե
Ավարտին հասցնել պատուհանների փոխարինման աշխատանքները (թվով 68 պատուհան):	Տնօրեն Տնտ. գծով տեղակալ	2024-2025թթ.	Դպրոցի բյուջե
Ստեղծել ուսուցման գործընթացը բացօթյա տարածքում իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ՝օգտագործելով դպրոցի հողատարածքը:	Տնօրեն Տնտ. գծով տեղակալ	2022-2023թթ.	Դպրոցի բյուջե

	Գնումների համակարգող Հաշվապահ		
Ստեղծել թեքահարթակներ, դպրոցում ԿԱՊԿՈՒ հենաշարժական համակարգի խանգարումներ ունեցող սովորողների ուսումնական գործընթացը հնարավոր դարձնելու համար:	Տնօրեն Տնտ. գծով տեղակալ	2022-2023թթ.	Դպրոցի բյուջե
Դպրոցի միջանցքների, մուտքի, տարածքի տեսահսկող սարքերի նորոգում և արդիականացում:	Տնօրեն, Տնտեսական գծով տեղակալ, գնումների համակարգող	2022թ.	Դպրոցի բյուջե
Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել նոր էլեկտրոնային գրատախտակներ, համակարգիչներ, վերանորոգել հները, լրացնել արագամաշ սարքավորումները:	Տնօրեն, Տնտեսական գծով տեղակալ, գնումների համակարգող	2022-2026թթ	Դպրոցի բյուջե, նվիրատվություն ներ
Նորոգել և արդիականացնել դպրոցի միջանցքների, մուտքի, տարածքի տեսահսկող սարքերը:	Տնօրեն, Տնտեսական գծով	2022-2023թթ.	Դպրոցի բյուջե
Կահավորել դասասենյակ ուսուցիչների (փոխարինող ուսուցչի անհնարինության դեպքում) կողմից հեռավար դասեր կազմակերպելու համար:	Տնօրեն, Տնտեսական գծով տեղակալ, գնումների համակարգող	2022-2023թթ.	Դպրոցի բյուջե
Կահավորել ևս մեկ համակարգչային դասարան:	Տնօրեն, Տնտեսական գծով տեղակալ,	2022-2023թթ.	Դպրոցի բյուջե
Հոգաբարձուների խորհրդի ստեղծում	Տնօրեն	2022-2023ուստարի	

Շրջանավարտների խորհրդի ստեղծում	Տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ Դասղեկ-համակարգողներ	2022-2023ուստարի	
Ձեռնարկատիրական գործունեության ծավալում	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալ	2023-2026թթ.	
Ծնողական համալսարանի կազմակերպում	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալ ԴԱԿ	2022-2023թթ.	
Ուսուցիչների պարգևատրման մեխանիզմի մշակում և իրականացում	Տնօրեն մ/մ նախագահներ	2022-2023 ուստարի	
EMIS,ԴՇՀ էլեկտրոնային համակարգի, հաշվապահական ծրագրերի պաշտոնական կայքերի հետ աշխատող վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ բոլոր աշխատողների համար պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ, սեմինարներ	Տնօրեն օպերատորներ	2022-2026թթ.	
Սովորողների մոտիվացիայի ուսումնասիրություն	Տնօրեն, հոգեբան, ինֆորմատիկայի ուսուցիչ	2022-2023 ուստարի	
Սովորել և սովորեցնելու ավանդույթի ներդրում	Տնօրեն Տնօրենի տեղակալներ	2022-2023 ուստարի	

Դպրոց ընդունվող սովորողների հետ կազմակերպել խարհրդատվություն, իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան հոսքի ճիշտ ընտրություն կատարելու նպատակով	Տնօրենի տեղակալներ ընդունող հանձնաժողով	2022-2026թթ.	
ՏՀՏ և արհեստագործական հոսքերի ձևավորում	Տնօրեն Տնօրենի տեղակալներ	2022-2026թթ.	
«190-ի կամուրջներ » ֆորմատի ներդրում	Տնօրեն Տնօրենի տեղակալներ Դասղեկ-համակարգողներ	2022-2026թթ.	
Արտադասարանական խմբակների ստեղծում	Տնօրեն Տնօրենի տեղակալներ	2022-2026թթ.	
Օլիմպիական ակումբների ստեղծում	Տնօրեն Տնօրենի տեղակալներ մ/մ նախագահներ	2022-2023թթ.	
Արմաթ ինժեներական լաբորատորիայի հիմնում	Տնօրեն Տնօրենի տեղակալներ	2022-2024թթ.	
Համագործակցություն Xdrive կազմակերպության հետ	Տնօրեն	2022թ.	
Համակարգչային նոր դասարանի կահավորում	Տնօրեն Տնօրենի տեղակալներ	2022թ.	

Ընդգրկում Մենթոր դպրոցների շարքում	Տնօրեն Տնօրենի տեղակալներ Ուսուցիչներ	2022-2023թթ.	
Ուսուցիչների պարտադիր վերապատրաստումների կազմակերպում	Տնօրեն Տնօրենի տեղակալներ Ուսուցիչներ	2023-2024թթ.	

7.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌԻՍԿԵՐ

1. Արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներ

#Տարերային աղետներ

#Պատերազմներ

#Պանդեմիա

2. Ֆինանսավորման կրճատումներ

3. Արտաբյուջետային միջոցների ներգրավման դժվարություններ

4. Ռիսկեր ձեռնարկատիրական գործունեություն ծավալելիս

5. Փոփոխություններ համակարգը կանոնակարգող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում

6. Կադրերի ներգրավման դժվարություններ

7. Ուսուցչի վտանգված հեղինակություն

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Արտակարգ և ֆորսմաժորային իրավիճակների՝ հատկապես սուր վարակիչ հիվանդությունների տարածման դեպքում ռիսկերը նվազեցնելու նպատակով աշխատողներին և աշակերտների հնարավորինս սեղմ ժամկետներում զինել հեռավար կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր գործիքներով և հմտություններով:

2.Ֆինանսավորման կրճատումներից խուսափելու համար բարձր պահել դպրոցի վարկանիշը և շարունակել աշխատանքները նույն կարգապահությամբ, հետևողականորեն իրականացնել դպրոցի զարգացման ծրագիրը:

3.Լինել ճկուն, արագ կողմնորոշվել և հարմարվել փոփոխություններին:

4.Աշխատողների աշխատավարձերի, պարգևատրումների մեխանիզիմի ներդրման, ինչպես նաև լրացուցիչ աշխատանքների և վարձատրության շնորհիվ ներգրավել որակյալ կադրեր:

8.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ,ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ կատարվող,ինչպես նաև հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող փոփոխությունները՝ անհրաժեշտ է հաճախակի անդրադառնալ դպրոցի զարգացման ծրագրին, իրականացնել արդյունքների գնահատում պարզ և բարդ ցուցանիշների համեմատական ներկայացման, համապատասխան հաշվետվությունների և այլ միջոցներով:

Դրանք պետք է հասանելի լինեն դպրոցի շահառուներին (պետական լիազորված մարմիններ,դպրոցի աշխատակազմ,ծնողներ,սովորողներ,համայնք և այլն):

Դպրոցի զարգացման ծրագրում ընթացիկ աշխատանքների և արձանագրված արդյունքների վերաբերյալ անհրաժեշտ է պարբերաբար հրապարակել տեղեկատվություն դպրոցի կայքում, իրազեկել մանկավարժներին, ծնողներին՝ ժողովների և դպրոցական միջոցառումների ժամանակ:

1. Դպրոցի կառավարման խորհրդի կողմից, տարեկան առնվազն երկու անգամ, դպրոցի տվյալ ուսումնական տարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված զարգացման ծրագրի դրույթների կատարողականների, հաշվետվությունների քննարկում և համապատասխան գնահատականների ամրագրում:
2. Դպրոցի կառավարման խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրում:
3. Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքների կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը:
4. Դպրոցի կառավարման խորհրդի մասնակցությունը տնօրինության կողմից զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը:

8.ԴԶԾ-Ի ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ,ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ